*Պ-339[1]-13.07.2022-ՊԻ-011*

**ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ**

**ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված* 1.** «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքում (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «համայնքի ղեկավար» և «համայնքի ղեկավարի պաշտոնակատար» բառերից հետո լրացնել «(բացառությամբ համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու)» բառերը:

***Հոդված* 2**. Օրենքի 22-րդ հոդվածում՝

1) Վերնագրում «Համայնքի» բառը փոխարինել «Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի» բառերով,

2) 1-ին մասի «Համայնքի» բառը փոխարինել «Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի» բառերով,

3) 3-րդ մասի «Համայնքի» բառը փոխարինել «Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի» բառերով:

***Հոդված* 3.** Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) Վերնագրում «Համայնքի» բառը փոխարինել «Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի» բառերով,

2) 1-ին մասի «Եթե» բառից հետո ավելացնել «մեծամասնական ընտրակարգով ընտրված» բառերով,

3) 2-րդ մասի «Համայնքի» բառը փոխարինել «Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի» բառերով:

***Հոդված* 4**. Օրենքի 69-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը վաղաժամկետ դադարեցնում է ավագանու լիազորությունները, եթե «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ կամ 142.3-րդ հոդվածով սահմանված կարգով նիստը գումարելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում համայնքի ղեկավար չի ընտրվում:».

2) 3-րդ մասում «ավագանու լիազորությունները» բառերից առաջ ավելացնել «Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերով» բառերը:
3) 6-րդ մասը «հետո՝ 10-րդ օրը» բառերից հետո լրացնել «, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում դատական ակտի հրապարակման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը» բառերով:

**Հոդված 5**. Օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի «տարածքային» բառը փոխարինել «ընտրատարածքային» բառով:

**Հոդված 6**. Օրենքի 72-րդ հոդվածում՝

3) 2-րդ մասը «հետո՝ 10-րդ օրը» բառերից հետո լրացնել «, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում դատական ակտի հրապարակման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը» բառերով:

**Հոդված 7**. Օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասում «համայնքի ղեկավարի կողմից» բառերը փոխարինել «ավագանու» բառով:

**Հոդված 8**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքում (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «համայնքի ղեկավար» եւ «համայնքի ղեկավարի պաշտոնակատար» բառերից հետո լրացնել «(բացառությամբ համամասնական ընտրակարգով ձեւավորված ավագանու)» բառերը:

***Հոդված 2.*** Օրենքի 22-րդ հոդվածում՝

1) Վերնագրում «Համայնքի» բառը փոխարինել «Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի» բառերով,

2) 1-ին մասի «Համայնքի» բառը փոխարինել «Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի» բառերով,

3) 3-րդ մասի «Համայնքի» բառը փոխարինել «Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի» բառերով:

***Հոդված 3.*** Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) Վերնագրում «Համայնքի» բառը փոխարինել «Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի» բառերով,

2) 1-ին մասի «Եթե» բառից հետո ավելացնել «մեծամասնական ընտրակարգով ընտրված» բառերով,

3) 2-րդ մասի «Համայնքի» բառը փոխարինել «Մեծամասնական ընտրակարգով ընտրված համայնքի» բառերով:

~~***Հոդված 4.*** Օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝~~

~~«Գործող համայնքի ղեկավարը սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում վայր է դնում իր լիազորությունները, իսկ նորընտիր համայնքի ղեկավարը քվեարկությունից անմիջապես հետո ստանձնում է իր լիազորությունները:»:~~

***Հոդված*** ***~~5.~~*** ***4***Օրենքի 69-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը վաղաժամկետ դադարեցնում է ավագանու լիազորությունները, եթե «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ կամ 142.3-րդ հոդվածով սահմանված կարգով նիստը գումարելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում համայնքի ղեկավար չի ընտրվում:».

2) 3-րդ մասում «ավագանու լիազորությունները» բառերից առաջ ավելացնել «Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված հիմքերով» բառերը:

~~3) 6-րդ մասում երկրորդ նախադասության «նիստը հրավիրում է» բառերը փոխարինել «առաջին նստաշրջանն անցկացվում է» բառերով.~~

~~4)~~ 3)6-րդ մասը «հետո՝ 10-րդ օրը» բառերից հետո լրացնել «, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում դատական ակտի հրապարակման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը» բառերով:

***Հոդված*** ***~~6~~5.*** Օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասի «տարածքային» բառը փոխարինել «ընտրատարածքային» բառով:

~~***Հոդված 7.*** Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.~~

~~«Համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում այդ մանդատը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ տրվում է համապատասխան կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում: Եթե վերջինս հրաժարվում է մանդատից, ապա նա հանվում է թեկնածուների ցուցակից: Եթե ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:»:~~

***Հոդված*** ~~8~~.***6.*** Օրենքի 72-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «նիստի» բառը փոխարինել «նստաշրջանի» բառով:

2) 2-րդ մասում «նիստը» բառը փոխարինել «նստաշրջանը» բառով:

3) 2-րդ մասը «հետո՝ 10-րդ օրը» բառերից հետո լրացնել «, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում դատական ակտի հրապարակման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը» բառերով:

~~***Հոդված 9.*** Օրենքի հոդված 74-ը ուժը կորցրած ճանաչել:~~

***Հոդված*** ~~10.~~ ***7*** Օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասում «համայնքի ղեկավարի կողմից» բառերը փոխարինել «ավագանու» բառով:

~~***Հոդված 11.*** Օրենքը ավելացնել 76.1.-րդ հոդվածով՝ հետեւյալ շարադրությամբ՝~~

~~*«Հոդված 76.1. Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունը*~~

~~1. Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունը տեղի է ունենում սույն օրենքի 64-րդ հոդվածի 7-13-րդ մասերով սահմանված կարգով:~~

~~2. Համայնքի ղեկավարը, անկախ իր ընտրության ժամկետից, պաշտոնավարում է մինչեւ ավագանու լիազորությունների ժամկետի ավարտը:»:~~

***Հոդված*** ~~*12*~~***.8*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ( Պ-339-13.07.2022-ՊԻ-011/0) ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| | Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը | Առաջարկ (փոփոխություն, լրացում) | Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | Հեղինակ | Նախագծեր **Հայաստանի** Հանրապետության սահմանադրական օրենքը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին օրենքում» | Համապատասխան փոփոխությունները տես տեղեկանքներով | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին | | | |
| Հեղինակ | «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին»օրենքի նախագիծ | Հանել օրենքների նախագծերի փաթեթից | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հեղինակ | «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում  լրացում եվ փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ | Լրացնել օրենքների նախագծերի փաթեթը | Ընդունվել է | Ընդունվել է |
| Հեղինակ | «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ | Լրացնել օրենքների նախագծերի փաթեթը | Ընդունվել է | Ընդունվել է |